

3581

15  
8-16

318 15  
5-16  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՔԱԿՈՒԼՏԵՏԻՆ ԿԻՑ ՀԵՌԱՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՐՈ**

14 JUL 2009

Զեռագրի իրավունքով

ԿՈՒՐՍ I

1930

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ն 3.

Գ. ԵԴԻՑԱՆ

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ „ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ-ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ ՑԵՎ ԸՄԲՈՆՈՒՄՆ“

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ.

1. Զգայության առաջամալը :
2. Զուռ զգայություն գոյություն չունի:
3. Զգայության հատկանիշները :

Բ. ԶԳԱՅԱՆՆԵՐ ԿԱՄ ՌԵՑԵՊՏՈՐՆԵՐ.

1. Մաշկի սեցեպտոր.
2. Մկանային սեցեպտոր.
3. Ճաշակելիք.
4. Հոտուողիք.
5. Լսողություն և տեսողություն.
6. Ապեցիֆիկ ենթրդիալի որենիք.
7. Գրգորի կամ զգայության վերին և ներքին շեմք.
8. Վերեր—Փեխնմերի որենիք.

Գ. ԸՄԲՈՆՈՒՄՆ.

1. Ըմբռնումը նոր տպավորությունների և հիմ փորձի սինթեզ.
2. Ըմբռնում և ապահովեացիա.
3. Ըմբռնան ելեմենտները զատկած չեն գիտակցվում.
4. Ըմբռնումն առարկայացած է դուրս.
5. Ըմբռնումը նոր և հիմ տարրերի պարզ գումարը չե.
6. Ամբողջականության— ֆորմի դերն ըմբռնան ժամանակ.
7. Ըմբռնան տիպեր.
8. Ըմբռնան տեսակները.
  - ա) ձիշու ըմբռնումն,
  - բ) կասկածելի ըմբռնումն,
  - գ) Սիսալ ըմբռնումներ՝ իլյումինայիս և կայումայիս:



ՀԿԿ 60 - 59

# ԶԳԱՅՈՒԹՅԱՆ-ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ ՑԵՎ ԸՄԲՈՆՈՒՄՆ

## Ա. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ

### 1. ԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՆԱԼԲ

Զգայություն ունենալու համար պետք է արտաքին աշխարհում գործություն ունենան փիզիքական գրգիռներ (յիթերի կամ ողի ուստանումներ, տաք կամ ցուրտ առարկաներ և այլն) :

Այդ գրգիռները պետք է ազգեն մեր զգայարանների (աչքի, ականջի, քթի և այլն) նյարդերի վրա և գրգուն նրանց այդ գրգուվածությունը զգացող կամ կենարունաձիգ նյարդերի միջոցով պետք է համեմուղեղի տեսողական, լսողական կամ մյուս կենարուններին, վորովեսղի ամէ կենարուններում առաջացող ֆիզիորգիքական պրոցեսների հետ միասին արթնանան գույնի, ձայնի, հոտի, համի կամ այլ զգայություններ— առավորություններ արտաքին աշխարհի մասին :

### 2. ԶՈՒՏ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ ԶՈՒԻՆԻ

Իսկապես մարդ չի ապրում առանձնացած, չկա մաքուր զուտ զգայություն գույնի, ձայնի, հոտի և այլն, վորովհետեւ հոգեկան պրոցեսները միշտ ել բարդ են, յեթէ կարմիր զույնի զգայություն ունենք, զախտական կապված և առարկայի, նրա մեծության, ըրջասպատի և այլ հանգամանքի հետ. ներկայի ամեն մի զգայական նոր առավորություններացած և անցյալի վորձը (առարկայի տարածությունը, ձևը, նշանակությունը, գնահատանքը և այլն) :

Հավանորեն մանկան զիտակցության առաջին որերին միայն զոյտթյուն և ունենում զգայության պես մի բան, յերբ նա զգում է ինչ վոր ձայն, ինչ վոր դույն, չմիցած վորոշակի տարածության, ձևի, արժեքի և այլ հանգամանքների հետ, վորովհետեւ նրա չաշխատած ուղեղն անցյալի վորձ, հիշողական տարբեր չամին: Հասուն մարդը զուցեց ուշաղրության սաստիկ ցրվածության կամ կիսառշաթափի վիճակի մեջ միայն կարող և զգայությանը մոտ ապրումներ ունենալ, յերբ զգում է, վոր ինչ-ինչ առավորություններ և ստանում, բայց ուսուր չի գիտակցում, թե ինչ ին վրանք:

Զգայությունն իսկապես մեր մտավոր անալիքի (վերլուծության) արդյունքն է, մենք մեր բարդ բմբանումները վեր ենք լուծում մտավորական (վորովհետեւ փաստապես, ֆիզիկապես վերլուծել չի կարե-

լի) իր բաղկացուցիչ մասերին, նրա տարրերը (զգայությունները) առանձնացնում ենք իրարից, բարդությունն ավելի լավ բմբաներու համար:

### 3. ԶԳԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆՈՒՅՆԵՐԸ

Զգայությունը մեր մտավոր—ինտելլիկուուալ (իմացականության) կյանքի այն տարրն է, վորն ել չի կարելի անալիքի յենթարկել— տարրալուծել: Մաքուր կարմիր զույնը չի կարելի վորակաղութեալիք տարրալուծել, ինչպես խառը զույները, կամ բարդ սուարկուները: Զգայություններն այն միավորներն են, վորոնցից կաղմացում են բարդ տուրումները:

Զգայությունն անի վորակ (զույն, ձայն, հոտ, համ և այլն), վորով իրարից պարզ ու վորոշակի տարրերվում են. վոչ միայն տարրեր զգայարանների աված զգայություններն են տարրերվում իրարից, (որ զույնը և ձայնը), այլ և նույն զգայարանի զգայությունները վորակով տարրերվում են իրարից (կարմիր, կանաչ, զեղին գույներ, քայլցր, զարոր, թթու համ և այլն):

Զգայության վորակը պայմանավորված է գրգորի վորակով, յեթ մեկը չունի համապատասխան զգայարան (որ. աչք), նրա մեջ չի կարելի նկարագրի միջոցով այդ զգայարանին հատուկ զգայությունների վորակի ապրումն առաջացնել:

Հենց այդ վորակների պատճառով ել զգայությունները բաժանվում են՝ լսողականի, տևողականի, հոտի, համի և այլն:

Զգայություններն ունեն նաև ինտենսիվություն (ուժ, թափ), որմինույն վորակի «գոռ» ձայնը կարող է տարբեր ուժով լովել, նույն ահակի ցամքը տարբեր սաստիկությամբ, ուժով ասլրի և այլն:

Զգայությունների ահասկավորությունն ունեն միայն բարդ որդոնիւնները: Կենդանական աշխարհի սորբին աստիճանների վրա նկատվում է, վոր տարբեր գրգիռների՝ կենդանիները նույն ահասկի ուղղացնուի են պատասխանում, նրանց որպանները դեռ գիֆֆելենցիոցիալ չեն յենթարկել և վրա համար ել չեն կարող որ. լույսի, ձայնի կամ այլ զգայությունների գրգիռներն իրարից տարբերել:

### 4. ԶԳԱՅՈՒՄԱՐԱՆՆԵՐ ԿԱՄ ՌԵՑԵՊՏՈՐՆԵՐ

1. Մաշկի ոեցեպուր սրա տակ հասկացվում են մարմինը շրջապատող կաշին և ներքին ու տրտաքին բոլոր մաղասային թաղանթները (слиզիստիկ օբոլոչքի): Մաշկի այս ոեցեպուրը ասայիս և շոշափման (շփման—պրիկօնունելու ձաւլունություն) նիշման (ոզմելու—ձաւլունություն) տաքի և ցրտի (տեմպերատուրային) և ցափի զգայությունները: Այս ջոկ տեսակի զգացողություններից ամեն մեջ համար

մաշկի մեջ կան նյարդերի ջոկ տեսակի կատուցված վերջավորություններ, վորոնք առաջածված են մաշկի մեջ բավականին անհամաշաբախություննասիրությունները ցույց են տվել, վոր միջին թվով մի քառակուսի առատիմեար մաշկի վրա կան 25 կետ ճնշման, 13 կետ ցրտի, 2 կետ տաքության և մոտ 100-200 կետ ցավի:

• Շոշափման և ճնշումի զգայությունները գրեալ և սահմանադեմ մեկը մյուսից, մաշկի մակերեսվութին հպիում ենք, ստանում ենք չոշափման զգայություն, իսկ յերբ ավելի ուժեղ ենք հպիում, ստացվում և ճնշումի զգայություն:

Յավի զգայություն և առաջանում, յերբ մաշկի այս կամ այն զգայություններ շատ և ուժեղանում կամ յերբ որդանիզմի այս կամ այն հյուսվածքը վնասվում է, որ. ծակելուն, ուժեղ ճնշմանը հաջորդում է ցավի զգայություն:

Յավի զգայությունը միշտ ել կարված չի չոշափման զգայության հետ, նա կարող է ինքնուրույն ել առաջանալ, որ. վորոշ հիվանդությունների ժամանակ մաշկի մի վարուչ մասի չոշափման զգայությունը վերացած և լինում, այն ինչ ցավի զգայություն գեր գոյություն ունի:

Նույնպիսի ինքնուրույն բնույթ ունեն ցրտի և տաքության զգայությունները:

Գոյություն ունի նաև մաշկի ներքին զգայություններ, վորոնք կոչում են նաև ընդհանուր զգայություններ:

Արա տակ հանկանում ենք այն զգայությունների միահամուսությունը, վոր սաացվում և սրտի, թոքերի, փայծախի, լյարդի և այլ ներքին որդանների գործունեյությունից: Արանց զգայությունների միահամությունը նրա համար ենք ընդհանուր զգայություն անվանում, վորովհետեւ դրանք գժվար են լոկալիզացիայի (առզավորման) յենթարկվում: Արանքին մաշկի զգայության տեղը վորոշակի զիտենք, այն ինչ ներքին որդանների զգայության ճիշտ տեղը վորոշելն անհնար է, կամ գժվար, կամ նույնիսկ սիսալ ենք տեղավորում (որ. թոքի վերին մասումն և հիվանդագին պրոցեսը, իսկ մենք ցավն զգում ենք կողքի մեջ: Հաճախ այս ներքին որդանների զգայությունները սերուիր են միանում և մենք ունենում ենք մի ընդհանուր ինֆինզուացիոն մեջ:

Մաշկի ներքին զգայություններն են քաղցի, կշտության, ծարավի, ուղարկասաւթյան, սիրտ խառնելու և ցավի զգայությունները, վորոնք ընդհանրագես ընդհանուր բնույթ ունեն և չեն կազակցվում ներքին որդանների այս կամ այն տեղի:

## 2. ՄԿԱՆԱՅԻՆ ՈԵՑԵՊՏՈՐ

Մկանների մեջ կան նյարդային վերջավորություններ, վորոնք ավելի կամ պակաս չափով գրգռվում են՝ նայած թե մկանն ինչ ուժեղությունը և կծկվում. շարժման պատկերացման բազկացուցիչ մասն են կազմում մկանային այդ զգայությունները: Բայց շարժման պատկերացման մասն են կազմում նաև մկանային գրգռությունների հետ միացած այն զգայությունները, վորոնք կազմած են չողերի չողերի չումների, ինչպես և արտաքին մաշկի շարժման հետ կազմված չոչափման զգայությունները: Հետո, այս ըոլորի հետ կազմվում են նաև տեղությունները (շարժումը տեսնելը):

Մկանների զործունեյության հետ են կապվում պնդության և ծանրության զգայությունները:

## 3. ՃԱՇԱԿԵԼԻՎԻ ՈԵՑԵՊՏՈՐ

Այս ոեցեպտորի տված հիմնական զգայություններն են.— քաղցր, զառը, աղին և թթուն: Ամեն մի զգայության համար տարբեր կասուցվածքի բջիջներ կան, վորոնք առանձնապես շատ համախմբված են լեզվի այս այն մասում— քաղցրինը՝ լեզվի ծայրին՝ լեզվի հետեւ մասում, թթուենը՝ լեզվի ափերին, աղինը՝ լեզվի ծայրին և ափերին: Այս ոեցեպտորի գրգիռները քիմիական բնույթ ունեն, աննորին նյութը լուծվում և թթվ հեղուկի մեջ:

## 4. ՀՈՏՈՏԵԼԻՎԻ ՈԵՑԵՊՏՈՐ

Քթի ներսի և քիմիկի վերին մասի մաղասային թաղանթի նյարդերի վրա լուծվում են Հոտ արձակող առարկայի նուրբ և անկատելի մասնիկները և տալիս հոտի տարբեր զգայություններ:

## 5. ԼՍՈՂԱԿԱՆ ՈԵՑԵՊՏՈՐ

Այս ոեցեպտորը տալիս է բազմաթիվ ձայնային և աղմուկների զգայությունները. մարդ կարող է մոտ 20 ձայնար ձայն և աղմուկ տարբերել:

## 6. ՏԵՍՈՂԱԿԱՆ ՈԵՑԵՊՏՈՐ

Այս ոեցեպտորի ոգնությամբ ըմբռնվում են մոտ 150 գույնային տարբերություններ: Լույսի ալիքները լինում են տարբեր յերկարությունները, այդ յերկարությունների տարբերությունները տալիս են տարբեր գույնի զգայությունները:

Աղեկարումի գույները պատասխարված են այսպես.

1. կարմիր (ամենայերկարը),

2. սրանգ (նարնջագույն),

### 3. $qLqfb$ ,

## 4. *Hyacinth,*

### 5. *Lemnaceae*,

## 6. *Մասկ կապույտ,*

7. մանիշակաղույն (ամենակարճ այիբք ունեցողը):

Գույների խառնուրդների ժամանակ նկատված է լեռեր լեռնութեալ:

ա) Սպեկտրալ բոլոր գույների միացումը տալիս է սպեկտրի գույնը;

բ) Վերոշ անսակիի յերկու դույն տալիս են սպիտակ դույն (սր.)

*միք և կանաչը, մուգ կապույտը և դեղինը) :*

դ) ՅԵԺԵ սպեկտրումի մի յերկու գույն միացվում ե , տալիս է այց մեջանցն յեզող գույնը , որ . կարմիրը և դեղինը տալիս են սահման , կապույտը և մանիչակապույնը՝ մուգ կապույտ և այլն :

Գույնի զգայությունը կախված է վոչ միայն այլ գույնի ալիքների սահմանաւումներից, այլ և այն հանդամանքից, թե նայողն առաջ ինչ գույնի յև նայել, կամ յեղած գույնն ինչ գույնի վրա կամ ինչ գույնի մոտ և զրված յեղել. որ. յեթե կարմիր գույնին նայելուց հետո սպիտակին յենք նայում, տեսնում ենք սպիտակի վրա կանաչ գույն և լոնդ հակառակն:

(ԱԼԵԳՐԱՊՈՅՆԵՐԻ— զգայարանների անառոմիայի և Փիդիոլոգիայի մասին աևս «Անառոմիա և Փիդիոլոգիա» դասազրքի առաջնադրությունները) :

#### 7. ԱՊԵՑԻԹԻԿ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՈՐԵՆՔ

Ամեն մի ռեցեպտոր զրգովում և իրեն հասուեկ զրգիոներից և առ-  
ըս և իրեն հասուեկ զգայություն և յեթե այդ նույն ուշեցեպտորը, որ  
աչքը, զբունքը այլ ախակի զրգիոներով, նա ելի կտա նույն զգայու-  
թյանը. յեթե աչքի ցանցաթանգանթը մեքենայորեն աղմենք, տեսո-  
ւության նյարդը ծակենք, կտրենք, կշմթենք կամ ելեքտրականու-  
թյամբ զբանք, փորձի յենթակա մարզը միշտ լույսի զգայություն  
կանանա. նույնը կարելի յէ ասել նաև մյուս ուշեցեպտորների մտմին:  
Սրանից յեզրակացվեց, վոր ամեն մի ռեցեպտոր իրեն հասուեկ զրգումն  
ձեն անի: Այս սպեցիֆիկությունն արդյօք կախված է միայն ռեցեպ-  
տորից, թէ՞ միայն ուղեղային հասուեկ կենտրոններից (որ բարե-  
թյուն, տեսազություն և այլն), թէ՞ այդ յերկուսն ել միասին, մինչեւ  
այժմ վերջնականորեն սպարզված չէ: Ավելի հավանական է համար-  
վում. վոր այդ սպեցիֆիկություն հարցում դեր ունեն և ռեցեպտորի  
ծարքը նյարդային վերջավորությունները և ուղեղի կենտրոնը, մաս-  
կանդ վերջինը:

8. ԳՐԳՈՒԻ ԿԱՄ ԶԳԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ  
ՇԵՄՓ

ԱԵցեպառը չի գրգովում արտաքին աշխարհի ամեն մի իրեն հա-  
առակ պրզոից, շատ թույլ և շատ ուժեղ գրգիռները չեն լմբանվում:  
Այսպիս որինակ՝ մեր աշքը գրգովում և և գույն և տալիս 400 միլիոն  
յերրորդական միլիմետր յերկայնք ունեցող յեթերի տատանումից մին-  
չե 760 միլիոն յերրորդական միլիմետր յերկայնքի տատանումը. վե-  
րա և ներքե յեղած տատանումներն անըմբոնելի յեն:

Ականջը գրբնիվում և ձայնի զգայություն և տալիս, յեթե ողբ մի վարկանում 1-ից մինչև 40 հազար տասնանում և տալիս:

Մաշկի ամենասառնվագն զրդիսը վորպեսղի զգայություն տա, պետք է ունենա 0,002 գրամ ծանրություն :

Այս առնվազն գրգիռը, վորը տալիս և ամենաթույլ, հաղիվ նկատելի զգայություն, կոչվում է գրգորի կամ զգայության ներքին (մինիմալ) չեմք, այն սահմանը, յերբ սաստիկ ուժեղ գրգիռը զադարում է զգայության տալուց, կոչվում է գրգորի կամ զգայության վերին (մաքսիմալ) չեմք:

Բւժեղ զրդիսների ժամանակ զգայությունը ահսողության հետ եկացված :

Վերին հիշված չափերը միջին քվի արժեք ունեն, զորագիտուկ զանագան անհատների վերին և ներքին շեմքերի ծավալն այս միջին թվերից մեծ կամ փոքր է լինում: Եռոյնիսկ նույն անհատի զգայության այս շեմքերի մեծությունը փոփոխական է, նայած թե այդ անհատը հոգած է, թե թարմ, ուշաղիր է, թե անուշաղիր, տրամադիր է, թե անտրամադիր:

### 9. ՎԵԲԵՐԻ ՅԵՎ ԹԵԽՆԵՐԻ ՈՐԵՄՔ

Այս որենքը պարզում և զգայության և դրվոի հարաբերությունն ու կապը : Սարըյա փորձն անգամ ցույց է տալիս, վոր յեղած դրվոի ամեն մի համելման շի համապատասխանում զգայության փոփոխության . որինակ՝ մեծ աղմուկի ժամանակ աղմուկի վայրում յեղող խոսակցությունը չի ուժեղացնում աղմուկը, յեթե ձեռքով բռնած մի ծանրության վրա փոքր ծանրություն զննիք, ծանրությունը չի փոխվում . լավ լուսավորակած սենյակի մեջ յեթե մի լամպ վառնիք, չենք զգալ, վոր ավելի լուսավորվեց :

Այս յերկու գիտականներին հետաքրքրեց այն ինդիբը, թե յեղած զրդով վրա ինչ քանակի հավելում պետք է անենք, վոր զգանք, վոր յեղած զգայությունը փոխվեց : Բայց աթիվ փորձերից հետո, նրանք յեկան հետեւալ յեկարակացության. տվյալ գրգռին պետք է ավելացնել այդ

գրգռի մի վորոշ մասը, վորաբեսի ստացվի մի նոր զգայություն, վորը հասկի հաջ տարբերվում է նախկին զգայությունից:

Որ գոնդած է, վոր ամեն մի յեղած լույսի վրա պետք է ավելացնել այդ ավյալ լույսի 1/100 մասը: Արինակ՝ յեթե սենյակը լուսավորված է 100 մոմի ուժի լույսով, պետք է, այդ լույսի վրա ավելացնել մեկ մոմի (1/100 մաս) լույս, վոր զգանքը, վոր սենյակի լույսը հաղիք ուժեղացած, յեթե սենյակը լուսավորված է 150 մոմ լույսի ուժով, պետք է ավելացնել այդ 1/100 մասը, վոր զգանքը լույսի ուժեղացումն:

Այս կերպ գոնդած են չափեր նաև մյուս զգայարանների համար: Յեղած ծայնի վրա պետք է ավելացնել 1/3 մասը, ճեշման համար (յեթե ծանրությունը ձեռքի վրա յե) 1/3 մասը, յեթե ձեռքը զրված է մի հենարանի վրա, 1/40 մասը, յեթե ձեռքը հենարան չունի, մարդկային զգայության համար (յեթե ծանրությունը կախված է ձեռքից կամ ձեռքն և բարձրացնում) 1/17 մասը:

Այս բալորից տեսնում ենք, վոր զգայության հաղիք նկատելի տարբերություն ստանալու համար պետք է գրգիռն այնպիս մեծացնել, վոր համեման մեծությունը միշտ նույն հարաբերության մեջ մնա ավյալ գրգոր մեծության համեմատությամբ:

Սա ևս բազմաթիվ փորձերից հանդած միջին թվի որենք է. նախ անհատներին են տարբերվում իրարից, այսինքն՝ տարբեր համեմանթիվը և հատուկ նրանց: Բացի այդ, նույն անհատն այս փորձերի ժամանակ տարբեր նրբազգացություն և ցույց տալիս այդ հավելումների վերաբերմամբ, նայած՝ վարժված է փորձին, թե վոչ, հոգնած է, թե թարմ, ուշադիր է թե անուշադիր, տրամադիր և խաղաղ վիճակում է, թե անտրամադիր, հուղված և այլն:

## Ը Մ Բ Ռ Ն Ո Ւ Մ Ն

### 1. ԸՄԲՌՆՈՒԽՄԸ ՆՈՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՅԵՎ, ՀԻՆ ՓՈՐՁԻ ՍԻՆԹԵԶ

Զգայարանների վրա ազգող գրգիռները չեն զիտակցվում իրեն մաքուր, զուտ զգայություններ. զոյտություն չունի զուտ զույնի զգայություն, այլ վորոշ ձե, հեռափորություն ունեցող զունափոր տարեկա, շոյություն ունի վորոշ բարձրություն, ուժ, արագություն և վորոշ աարածության մեջ յեղող ձայն: Մեկ տրվում են միայն բարդ, զանազան զգայություններից կազմված ամբողջություններ:

Այդ ամբողջությունների (սեղան, տաւն, ծառ), բմբոնման զրդապատճառներն արտաքին գրգիռներն են, վորոնց միահում են անցյալ փորձի վորոշ տարբերը (սեղարդությունի վերհիշված տարբերը) և այլ այլպիսով տալիս տարեկայական բմբոնման մի ամբողջություն:

8

Հեռվից նայում ենք մի սեղանի և տառը — սա սեղան է: Դրսի յեթերի աատահումները հասնում են մեր աչքերին և զրգում (արտաքին նոր տպագորություն), սա տալիս է սեղանի գույնի և մասամբ ձեի սպասկերացումը, սեղանը մեզ յերեսում է ծանր, ծանրությունը չենք տեսնում, այլ մեր անցյալ փորձից գիտենք (չին, անցյալի փորձ), սեղանը մեր մեջ արթնացնում է չոշափելիքի համելի զգայություն, վորովհետեւ վողորկ է, չոշափելիքի զգայությունը չենք տեսնում, ձեռքով չենք չոշափում, վորովհետեւ մեզնից հեռու յե, այլ այդպես զդալն անցյալ փորձի արգյունք է, սեղանին նայելիս առում ենք «սեղան», այս բան այդ առարկայի վրա չտեսանք, այլ ելի անցյալ — չին փորձի արգյունք է: Այս կերպ են ըմբռնվում նույն մյուս առարկաները:

Այսպիսով ըմբռնումը մի բարդ պրոցեսի արդյունք է, վորի կառուցմանը մասնակցում են արտաքին որյեկտիվ զրգիւմները (զգայություններն ու նրանց կոմպլեքսները) և դրանց անմիջապես միացող սրյեկտիվը — վերհիշված զգայությունները ու նրանց կոմպլեքսները (մատականերներ): Բըռնումը նոր և չին փորձի սինթեզի (համադրության) արգյունք է:

## 2. ԸՄԲՌՆՈՒԽՄ ՅԵՎ, ԱՊՊԵՐՑԵՊՑԵՑԻԱԼ

Դեռ 19-րդ դարի սկզբին դերմանացի հոգերան հերթարտը նկատել եր, վոր նոր տպագորությունները լրացգում, ամբողջանում են չին փորձի տարբերությունը, այս յերեկությունը նա անվանեց ապպերցեպցիա:

Ապպերցեպցիան հեղերանական այն ակտն է, վորի ժամանակ զգայական նոր բովանդակությունը վերամշակվում, հարստանում են անցյալ փորձի նիման վրա:

Նշանակում է, մեկի բմբռնումը կախված է այն բանից, թե այդ անձն ինչ տեսակի և ինչ քանակի մտապատկերներ ունի, ինչ տպագորությունները, ինչ կրթությունը, ինչ զրագմունք ունի, բմբռնման մոմենտին նրա զիտակցությունն ինչով է զրագված:

Հենց դրանով ել պետք է բացատրել այն հանգամանքը, թե ինչու տարբեր մարդիկ և նույն մարդն իր կյանքի տարբեր ժամանակներում միենալուն բանը տարբեր է բմբռնում. նրանց փորձը, նրանց ապպերցեպցիայի նյութերը տարբեր են իրարից: Որ, չին վոսկա մի զարդի պճնառեր մի կին նայում է լով կամ վատ զարգարանք լինելու տեսակետից, վոսկերիչն ինչ հարդի վոսկի պարունակելու տեսակետից, հնագետը, վոր զարդ և ինչ կուլտուրայի գործ լինելու տեսակետից: Այլ զրագմունքի մարդիկ ել այլ տեսակետից և մի փոքր այլ կերպ կըմբռնեն այդ նույն առարկան:

Տարբեր ձեռով միհնույն բանն ըմբռներու հանգամանքը կախված է

9

նու և Նրանից, թե ըմբռնողի միտքը փոքր ինչ առաջ ինչով է զբաղված յելն. կամ նա իրեն ինչպես և նախատրամադրել. որ. նկարչության և բնագիտության դասերին միհնուուն աշակերտը նույն ծաղկին տարբեր տեսակետից և նայում և ըմբռնում:

Այս ապակեցեպատիվ ավյալները պատճառ են զատնում, վոր ը բոնողն առարկաներն ըմբռնելիս զերադասության տեսակետ մտցնի, այն կողմն վորոշակի և մանրամասն ըմբռնի, վորը համապատասխան է հրա հիմնական հետաքրքրությանը՝ անուշաղբության մտանելով իբ համար յերկրագական կողմերը, վորը մի ուրիշի համար կարող է իմնական լինել: Ամեն մի ըմբռնուումն— դա ընտրություն է ըմբռնողի իմնական— զերիշխող հետաքրքրության— տենդենցների համաձայն: Այս զի՞ւ նկատվում է նուև աշակերտների մոտ:

Կյանքի փորձն սախալում է, վոր մեր զիտակցական բովանդակությունները, վորոնք իրար մոտ են և կարող են իրար հետ կցվել, կազմեն վորոշակի խմբեր ու սխտեմներ, վորոնք կոչվում են ապակեցեպատիվ խմբեր կամ մասսաներ:

Ապակեցեպատիվ այս խմբերի, ընդհանուր արժեք ունեցող այդ զիտեհիների չնորհիվ, մեր ըմբռնուումների մեջ կարգ ու ստորաբաժանություն և մտնում, յեղած մասնակի ըմբռնուումն ավելի բարձր և ընդարձակ խմբակության տակ և դրամ, մասնակին մտնում է ըմբռանութիւնը. որ., յերբ մի ձեռապիրի եմ տեսնում և ծանոթ եմ առաջարարկ ձեռադիր դրականության պատճության, իսկույն վորոշակ եմ, թե դա, վոր դարու ձեռապիր է, այս կերպ ըմբռնուումն ավելի բնորոշ և գտնում, յերբ մի կենդանի յեմ տեսնում, վորն իր զույնակ հարմարված է շրջապատին, դարպինիզմի հարմարման տեսության չնորհիվ առարկան ամբելի հարուստ հարուստ էնքայի ամբարտում, այստեղ միայն պարզ մի զույն չեմ տեսնում, այլ շրջապատին հարմարված զույն:

Այսպիսով, ապակեցեպացիայի չնորհիվ, ըմբռնուումները հարստանում են, ամելի բարձր տեսակետից են ըմբռնուում և այդ՝ չնորհիվ մեր անցյալ փորձի:

Մեր վրա առաջորություն թողնող այն դրգիսներն են անհետ կորչում, վորոնց համար մեր մեջ համապատասխան ավյալներ չկան: Հենց օրանով պետք է բացատրել այն վաստար, վոր մանուկն, առարկաների ըմբռնում և պայծառ, բայց վոչ լրիվ և բաղմակողմանի, վորովհետեւ նրա հին փորձն աղքատ է:

Եւրբ առեղծվել են և հիմնավորվել ապակեցեպատիվ խմբերը (մասսաները), այնուհետեւ դժվար է բանդել, վերացնել այն և անզը նորը զնել, մանականդ, վորոց տարիքից հետո, որ. կուտակցական վորոց աշխարհաշայիցություն, եսովքական վորոց ըմբռնուումներ ունենալուց

հետո, յերբ այդ միտ արյուն է դարձել, գժվար և փոխել, փոխելուց հետո անզամ, անզիտակից կերպով առորյա վարմունքների մեջ արուածարություն է գտնում հինը: Այս բանի վրա հիմնված գերմանական հոգեբանների մի մասը հին իմացության ալյուլ արժեք է տալիս, իսկ նորին պատսիվ: Գիտելիքը, ճիշտ և, առաջանում է հին և նոր գործի սինթեզից բայց սիսալ և մի կողմին բացարձակ ակտիվություն վերագրել, իսկ մյուս կողմին՝ պասսիվություն: Ճիշտ այն է, վոր մի գեպքում մի կողմն է ակտիվ լինում, մի այլ գեպքում՝ մյուս կողմը: Նոր զրգինը կարող է ապակեցեպացիայի հին մասսան հարստացնել և կամ, նույնիսկ կերպարանափոխնել. որ., յերեխան միմիայն չորս անկյունանի սեղան և տեսել, նա տեսնում է մի նոր, կլոր սեղան և գիտակցում, վոր դա յել սեղան է, գրանով հարստանում է նրա ապակեցեպացիան (սեղանը կարող է նաև կլոր լինել):

Գիտության մեջ համարի և պատահում, վոր յերբ մի նոր գյուտ կապի մէջ ենք զնում յեղած զիտական մի հին սիստեմի հետ, այդ սիստեմը հիմնովին կերպարանափոխում է:

Այս բայորը ցույց է տալիս, վոր ըմբռնումն մեջ հին և նոր եւեմնատից ամեն մեկը կարող է և՛ ակտիվ, և՛ պասսիվ լինել: Վորոշ անձանց մոտ և վորոց տարիքում (ծեր) զերակշուություն է ստանում հին ելեմնուը, իսկ վորոց անձանց մոտ և վորոց տարիքում (յերիտասարդ) նորը:

Պետք է տաել, վոր ապակեցեպացիայի պրոցեսը հանդես է գալիս վոչ միայն ըմբռնուումների, այլ և հոգեկան բոլոր պրոցեսների ժամանակի:

### 3. ԸՄԲՈՆՄԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԶԱՏՎԱԾ ԶԵՆ

#### ԳԻՏԱԿՑՎՈՒՄ

Ըմբռնումը կազմված է հին և նոր զգայություններից. նոր զրգինները նախ պետք է հասնեն ուղեղին, վորպետի այնուհետեւ հին զրգիններն արթնանան և միանան նորին:

Պետք է յենթագրել, վոր հին տարրերը ժամանակի մի վորոց տեղապաթյուն անցնելուց հետո յին միանում նորին:

Սակայն, պետք է նշել, վոր ըմբռնողը չի գիտակցում, չի զգում ժամանակի այդ տեսղությունը, նա չգիտե, վոր նա զիտակցեց նոր զգայությունը և հետո զրան միացան հին տարրերը: Նոր և հին ելեմնաներն այնպես արագ են իրար միանում, վոր ըմբռնողին այդ թվում է մի ամբողջական, միասնական ապրումն և զա հասկանալի յե, յեթե յերկու բան սասարկել արագ են իրար հաջորդում, նրանք իրար հետ են ձուրիւմ և մեզ թվում են ժամանակի նույն մոմենտում տեղի ունեցող մի պրոցես (որ. արագ պատիզան անիմը). հոգեկան տարրերի արագի միացումը կոչվում է ասսիմիլացիա:

#### 4. ԸՄԲՈՆՈՒՄՆ ԱՌԱՐԿԱՅԱՑԱԾ Ե ԳՈՒԽԱԾ

Հմբանման մի բնորոշ գիծն ել այն ե, վոր նոր և հին տպավորություններից կազմված այդ բարդ պրոցեսին համապատասխանող պատկերացումը գիտակցվում է իրեն դուրս առարկայացած մի միտքյուն։ Վոչ միայն դրսից, յեկող նոր զրգո՞ի զգայությունն է զուրսն առարկայացած, այլ և այն հին զգայությունները, մտապատկերային տարրերը, վորոնք միանում են նոր զգայությանը։ Հեռվում յեղող սեղանը մենք տեսնում ենք ծանր, շոշափելիքի հաճելի զգայությամբ, տաք կամ սառը, վորոնք հին փորձից են, բայց մեղ թվում ե, թե դրանք առարկայորեն կան սեղանի ըմբռնման մեջ։ Հին զգայությունները մեղ թվում են որյեկտիվ կերպով գուրսը, առարկայի մեջ։

#### 5. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՅՍ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՆՈՒՄ Ե ԱՎԵԼԻ ԿԱՄ ՊԱԿԱՍ ՉԱՓՈՎ ԼՐԻՎ ՈՒ ՀԱԲՈՒՄԸ

Իրը կազմված է լինում դասազան վորակներից, վորոնցից մի քանիս եյական ենք համարում, վորովհետեւ այդ հատկանիշներն ավելի մնայուն են, կամ հետաքրքրական են մեղ համար և կամ դորձնական տեսակետից կարեոր են, իսկ այն հատկանիշները, վորոնք անկայուն են և մնայուն չեն կամ ամբողջության պատկերացման համար վոչ կարեոր, համարում ենք ավելի կամ պակաս չափով անկարեոր կամ պատահական։ Որինակ, ձայն ենք լսում և ասում «կառք ե», բայց աղմուկը կառք չե, այլ կառքի վոչ եյական հատկանիշը, եյականն և նրա չափուի և տեսանելի առարկայականությունը։

Աստիճանաբար, փորձի ողնությամբ և մարդ այսպիսի գնահատական աւստակետ մտցնում բմբռնումների մեջ։

#### 6. ԸՄԲՈՆՈՒՄԸ ՆՈՐ ՅԵՎ ՀԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՐՁ ԳՈՒՄԱՐԸ

Բմբռնումը նոր և հին տպավորությունների մեխանիկ միացումը, պարզ գումարը չե, այլ որգանական, միաձույլ մի ամբողջական պրոցես, վորն իր տարրերի գիմաց մի վորոշ նորություն և ներկայացնում։ զա մի նոր վորակի ապրումն ե, վորի մեջ հին ու նոր ելեմենտները մասմբ դուխում են իրենց բնույթը։

Այժմ որինակներով ցույց կտանք, վոր հին տարրերը թուլացնում են զգայական նոր տպավորության ուժը, թափը, իսկ յերբ մենք արհեստականորեն թուլացնում ենք հին ելեմենտների ներգործությունը, նոր զգայական տպավորություններն ուժիկանաւում են։

ա) Յերբ բառերի ձայնախմբեր ենք լսում, իսկույն դրան միանում են այդ բառերի նշանակության իմաստները (հին փորձը), պատահում ե, վոր այս հին տարրերը— նշանակության իմաստները մի առ ժամանակ ուշանում են, իսկույն չեն միանում լսվող բառերին, այս զեղպում մեր ականջին են հասնում միմիշյն բառերի հնչյուններն ավելի վորացակի, չնչպում են մի ուրիշ ձեռով, բայց չենց վոր բառերին միանում են նրանց նշանակության իմաստներն, այժմ բառերն այլ տեսակ են վիտակցվում։ Մեր սեփական լեզուն մեզ ուրիշ ձեռի կնչչի, յեթե չհանանք բառերի իմաստները—բառերի բարձրացումն ու լինցումը, ուժեղանալն ու թուլանալը, արագանալն ու զանդաղելը մեզ բոլորովին այլ կերպ կթվան։ Ար կարող ե ծառայել ստար— անհասկանալի լեզուն, վորն այդ լեզուն չհանկացողի համար այլ կերպ ե հնչում։

բ) Յեթե զրի յերեսի մի բառ զնկենք և վրան յերկար նայենք, առանց այդ և նրան հաջորդող և նախորդող բառերի մտքերը հաջիմ առնելու, այդ մեր ընտրած բառը մեզ կերեա տարորինակ տեսքով, վորովհետեւ բառի իմաստը (հին փորձը) սովորական ձեռով բմբռնելու յեզանակը վիրացը ենք և թողել ենք միայն նոր տպավորությունը, դրայական զրգիւը։

շ) Յերբ բնության մի տեսարանի նայում ենք զլուխը ներքի կուտրած, անսովոր ձեռով, հեռավորության տարրերությունները և տարրածական վորոշակիությունն անհաստատ ե դասնեմ, վերհիշական, հին ելեմենտները հետ են մզգում և զրանց հետ մզման պատճառով զույները զանում են ուժեղ, հարուստ, լույսի և սպիրը կոնտրաստները— չափում են ավելի ցայտուն։ Նույն յերեւյթն ե նկատվում նաև թարս դրված զունավոր նկարի նայելիս։

Տեսնում ենք, վոր ըմբռնման ժամանակ զգայական նոր զրգիւները լիկությամբ չեն զիտակցվում, զիտակցվածներն ել ցայտուն, ուժեղ չեն լինում, այլ մասամբ թուլացած, մեղմացած են անցյալ վորձի (հինի) աղգեցությամբ։

Բմբռնման մեջ փոխվում են նաև հին ելեմենտները, վորոնք չեն զիտակցվում իրեն անցյալում յեղած, հիշողական մասնը, ինչպես չուկ զիտակցվելու ժամանակը։ Բմբռնման մեջ հին-հիշողական ելեմենտների անցյալում ապրած լինելու հանգամանքը վերանում է, նա մեզ հիշություն չի թվում, այլ իրեն արտաքին առարկայի մեջ այժմ որյեկտիվորեն գոյություն ունեցող առարկա։ Ուրեմն հին ելեմենտները թուլացնում են մի կողմից նոր տպավորությունների ուժը—թափը, պատճառ զանալով, վոր զրգիւների վորոշ կողմերն անուշադրության մասնիքն, վորոշ կողմերն ավելի պարզ զիտակցվեն (ապահեցելովիա) և մյուս կողմից ել իրենք են զգայուն որյեկտիվ յերեւյթի վորակ ստա-

նուր՝ հենց պրահամար ել ասում ենք, վոր ըմբռնումը հին և նոր առարերի պարզ մեքենայական դռւմարը չե, այլ որդանական մի նոր ամբողջություն:

## 7. ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ—ՖՈՐՄԻ ԴԵՐԸ ԸՄԲԻՆՄԱՆ ԺԱՄԱԿՆԱԿ

Ամբողջությունը— բարդությունը չի կարելի միշտ ել իր ելեմենտներով բացատրել և հասկանալ:

Էմբռնման ժամանակ միայն տարրերը, մասեր չեն բնորսչում ամբողջությունն, այլ և ամբողջությունը, ըմբռնման ստրուկտուրան վորոշում և մասերի արժեքը:

Մասերն ըմբռնման մեջ այնպիսի փոխհարաբերության մեջ են գրվում, վոր ստացվում և մի այնպիսի ամբողջական ապրումն, վորի փոխակը չի կարելի մասերով միայն հասկանալ: Նայած թե ըմբռնման ժամանակ գրգիռներն ինչ փոխհարաբերության, ժամանակային և տարածական ինչ հաջորդականության մեջ են գրված, բոս կորա յել ստացվում են առարկաների նոր ստրուկտուրաներ, վորոնց ամբողջության մեջ այնպիսի նորություն կա, վորը չկա մասերի մեջ: Ար միենայն մի քանի յերաժշտական ձայները ըմբռնվում են մեզանից իրեն այս կամ այն մելոդիա, նայած թե նրանք ինչ փոխհարաբերության մեջ են, մելոդիան զոյլություն չունի ջոկ, առանձին ձայների մեջ, նու մի նոր ամբողջություն և, վորն իր հերթին ազդում և ջոկ ձայների վրա:

Նույն առարկան, որ հայելին, նայած թե ինչ շրջապատի մեջ և գրված և միաւ առարկաներին ինչպես և հարաբերում, նոր արժեք և ստանում: Հայելին սենյակի մեջ հայելի յե և մեջ նայելու ցանկություն և արթնացնում, իսկ յեթե գրված և այնպիսի պայմանների մեջ, վոր իրենից ուժեղ լույս և արտացոլում, կորցնում և հայելի լինելու (մեջ նայելու) արժեքը:

Յերկրաչափական մի ձե, որ յեսանկյունի, մի այլ բարդ յերկրաչափական ձեից կազմված առարկայի մեջ մեզնից համարյաշ չի նկատվում, կամ այլ բնույթ և ստացած լինում ամբողջության մեջ: Նույն բանն առանձին վերցրած և ամբողջության մեջ մեզ այլ կերպ և յերեցնմ, վորովհետեւ ամբողջությունը կառուցվերով մասերից, իր հերթին ազդում և մասերի վրա: Այսպիսով ըմբռնումը վոչ միայն հին ու նոր գգայությունների սինթեզ և, այլ և մի նոր կառուցվածքի ամբողջություն, վորն ազդում և իր բազկացուցիչ ելեմենտների վրա:

## 8. ԸՄԲՈՂՆՄԱՆ ՏԻՊԵՐ

ա) Արյեկտիվ տիպ—Արյեկտիվ տիպն ըմբռնման ժամանակ՝ համեմատաբար քիչ և ողափում անցյալ փորձից, նու աշխատում և որյեկտիվ:

իբողությունն ըմբռնել այսպես, ինչպես այդ կա իրականության մեջ: ախատում և զատ անձնական—սուրյեկտիվ արժեքի լրացումներով չիսպաթյուրել ըմբռնումը:

Այս տիպը կարգավիս աշխատում և կարգալ ճիշտ, այնպիսինչպես զբաժան և, նույնիսկ տեսնում և տպագրական սիստեմներ, աշխատում և կարգացածի խմասությունը ճիշտ հասկանալ:

բ) Սուբյեկտիվ տիպ—այս տիպը զգայական նոր զրգիռները ոգտագործում և, վորպեսզի մեծ չափերով արթնացնի ներքին, անցյալ փորձի ազգեցեպաթիվ լրացումներ, յերեմն հեռանալով որյեկտիվ տվյալից:

Այս տիպը կարգում և արագ, կարգավիս հաճախ սիստեմներ և անում, կարգացածի միաբար յուրատեսակ և հասկանում, հաճախ սիստի:

գ) ԱՏԱՏԻԿ ՏԻՊ:

Ավելի սիրով ըմբռնում և միտն և պահում բնության ստատիկ—հանգիստ վիճակները—տեսարանները: Դիտածի մասին պատմելիս համարյա խոսք չի գործածում այն մասին, ինչ վերաբերում և շարժման:

դ) Դիտամիկ տիպ—այս տիպը սիրում և բնության մեջ յեզով շարժումները զիտել և մաքում պահել, բնության նույնիսկ հանգիստ վիճակների մեջ աշխատում և շարժում տեսնել:

## 9. ԸՄԲՈՂՆՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նայած թե ըմբռնման հին և նոր ելեմենտներն ինչպես են հարաբերում փաստական առարկային, ըմբռնումները լինում են՝ ճիշտ, կասկածելի և սիստ:

ա) Ճիշտ ըմբռնումն. ճիշտ և ըմբռնումն այն ժամանակ, յերբ նոր և հին ելեմենտներն իրար հետ միանում են իրականին համապատասխան ձեռվ և այդ բանը կարելի յե վիտագությամբ և փորձով ապացուցել: Հեռվից յերեացող սեղանն ըմբռնում եմ մի վորոշ տեսուկ, ապա մոտենում եմ, չոչափերով, բարձրացնելով, հստատելով համապատասխան վարժում, վոր իմ ըմբռնածը ճիշտ և յեղել:

բ) Կասկածելի ըմբռնումն. յերբ տեսնում եմ մի առարկա, վորի արագակությունը ավելի քան մի առարկայի հետ և զուգորդված, այդ գեղքում նախ նրան իրեն մի առարկա յեմ ըմբռնում, հետո իրեն մի ուրիշ առարկա այս կամ այն տվյալի հիման վրա առարկան վերջնականորեն այս կամ մի այլ առարկա յեմ համարում, վորով կասկածը վերանում է. իսկ յեթե այդ վճիռը տեղի չի ունենում, նրան հաշվառմանուն այն առարկան էմ համարում, վորն այսպիսի գեղքերում մեծ մասմբ այդ ըմբռնումն և առաջացրել: Այս գեղքում հետաքրքրականն այն է, վար նույն առարկայի հետ կապված— զուգորդված այդ յերկու շարժ-

քերը իրար չեն վերացնում, իրար չեն խառնվում, այլ լիսկատար վորոշակիությամբ նախ մի շարքն և արթնանում և յետ համարում եմ այն՝ այս ինչ առարկան, հետո մյուս շարքն և առաջանում և նույնին համարում եմ մի այլ առարկա, մինչեւ վոր վերջի վերջո մեկն և հաստակ կամ հավանական առարկան համարվում: Այսինքն աղեղի պրոցեսներն այնպիս են, վոր նրանք տալիս են ձևավորված—ամբողջական զիտակցություն, այսինքն՝ յերբ առարկայի հետ կապված զուգորդման զվթաները զրգություն են, նրանց զումարները տալիս են կապակից սիստմեր, առարկաների մասին կապակից մաքեր, ելեմենտները չեն խառնվում իրար հետ և տալիս մի խառնաշխիթություն:

զ) Սխալ ըմբռնութներ—Սխալ և լինում ըմբռնումն այն զեղչում, յեր նոր, զրսի ապավորությանը միանում են այնպիսի հին ելեմենտներ, վորոնք համապատասխան չեն այդ նոր ապավորությանը, կամ թւ չե, արտաքին զրգիլը չկա, զրսից չենք զրգությում, բայց ունենք բարեւնումն:

Առաջին ահատկի ըբժնումը կոչվում է իլլյուզիա, իսկ յերկրորդը, հալլյուցինացիա:

## 10. ԻԼԼՅՈՒԶԻԱ. ԿԱՄ ՄՏՏԱՊԱՏՐԱՆՔ

Իլլյուզիան մի սխալ ըմբռնումն է վորի վոչ թե արտաքին ապավորությունն և սխալ, այլ վերահէցված—հին ելեմենտները, վորոնք չեն համապատասխանում իրական գրգորին և անհամապատասխան լինելու պատճառով խեղաթյուրում են գրգիլը և տալիս սխալ ըմբռնումն:

Իլլյուզիայի պատճառը լինում է այն, վոր նոր գրգիլը ստանալուց առաջ միտքք զրագված և լինում մի այլ խնդրով, որ յեր ըմբռնողը սպասողական, լարված վիճակի մեջ և, վախ և զգում, գրգորված և մի վորոշ կրքի աղգեցության տակ և: Այսպիսի գեղքերում յերբ արտաքին զրգորի մի չնչին մասնիկը համապատասխան, նման և մերքին վիճակին, զա առիթ և զանում, վոր մեզ թվա, թե ըմբռնում ենք այն, ինչով զրագված եր մեր միտքք: Այսպիսի մտապատրանքների յենթակա յեն մեր բոլոր զգայարանները:

Վորոնզն անտառում մի վորոշ թուչուն և ուղում վորսալ, յեթե ձառի ձյուղերի մեջ մի թուչուն և տեսնում, վորը մեծությամբ կամ այլ կազմով մի փոքր նման և իր վորոնածին, նրան թվում և, վոր տեսավ ձիշու և ձիշու իր ուղած թուչունը, միայն թուչունին սպանելուց հետո յե, համոզվում, վոր սխարվել և: Անտառի մեջ մոլորվածք, գերեզմանանց վախեցողը, թագնված վոճարագործը, սիրահարվածք և այլն, մի պատճական ձայնի կամ տեսողական ապավորության պատճառով լուս և տեսնում են այն, ինչով զրագված եր նրանց միտքք:

Հագերան Զեմսի հետ պատահում և հետեւյալ լուղական իլլյուզիան, գիշերն իր մեջ արկածում զրազված և ընթերցանությամբ. հանկարծ լուսում և սարսափելի աղմուկ տան վերին հարկում, յերբ միջանցքն և անցնում լով լույսու համար, զագարում և աղմուկը, յերբ սենյակին և մտնում և ելի նստում իր հին տեղը, նորից լուսում և նույն աղմուկն ափելի ուժեղ, վորը հիշեցնում և փոթորկի սկիզբը, նորից միջանցքն և անցնում, աղմուկ չկա. յերբ յերկրորդ անգամ սենյակին և մտնում, նկատում և, վոր սենյակում քնած շան շնչառության ձայնիցն և այլ իլլյուզիան առաջցել:

Սրաքանոցը վշացած և և գարշահոսությունը տարածվել և ունյակում, յերբ վարպետը հայտնում և, վոր ամեն բան կարգի յե բերել, թեև փաստորեն վոչ կանոնավոր, ել հոս չենք զգում, միայն մի վորոշ ժամանակից հետո յենք հոս զգում:

Ցեթե յենթաղբում ենք և համոզված ենք, վոր սենյակի սպանցքը փակ և, խեղզուկ ենք զգում, հւնց վոր նկատում ենք, վոր ողանցքը բաց և, թեթե ենք չնչում:

Ցեթե յենթաղբում ենք, վոր վասարանը վառված և, տաք ենք համարում:

## 11. ՀԱԼԼՅՈՒԶԻՅԱՆԱՅԻ. ԿԱՄ ՑՆՈԲՔ

Հալլյուցինացիայի ժամանակ չկա աբտաքին դրգիս, արտաքին տառըկա, բայց մարդ հալլյուցինացիայի ժամանակ փաստորեն, իրադես, պայծառորեն տեսնում և իր սուած առարկա այնպես, ինչպես այն առարկաները, վորոնք լինություն մեջ դոյցւթյուն ունեն և աղդում են զգայարանների վրա:

Հալլյուցինացիան առաջանում և հանկարծ, անսպասելի ձեռով:

Հալլյուցինացիան մի կողմից նման և մտապատկերին, վորովհետու արտաքին գրգիլը չկա, այլ ներքին զրգորից և առաջանում, իսկ մյուս կողմից ել նման և ըմբռմանը, վորովհետեւ զուրսն առարկայացած և պատկերացվում: Հալլյուցինացիա քիչ և պատահում և քիչ մարդիկ են յենթակա հալլյուցինացիայի:

Հալլյուցինացիայի մի որինակ. 18 տարեկան մի աղջիկ, մի յերեկո ահաճ խոսակցություն և ունենում տարիքով մի մարդու հետ. աղջիկը զայրացած և, նրա մեջ ցանկություն և առաջանում վեճի մասին լույսու իր եղբօր կարծիքը, վորին անշափ սիրում եր: Ցեթե յետ և ըրջվում, տեսնում և յեղբօրը ձեռքերը խաչած (այդ սովորությունը նա չուներ) սեղանի մյուս կողմը նոտած, աղջիկը արսափով նրա զեմքին հեղնական մի արտահայտություն և տեսնում, յենթաղբում և, վոր յեղբայրը համաձայն չե իր հետ. այս բանը այնպես մնչիչ և աղջում, վոր վեճը գաղաքան պատճառում և: Մի քանի բոսկ հետո, յերբ ուշքի յե զալիս, զառարեցնում և:

գեղի յեղբայրը, վոր հետը խոսի, բայց յեղբայրն եւ չկա. յեղ-  
բայրը յերբ և և ունախկում չի յեղել, ինչպես հետո ստուգփում է:

Հալլյուցինացիայի մի առանձին տեսակ և պաեվդրհալլյուցինոցիւն  
(կեզծ հալլյուցինացիա), վորի ժամանակ չկա առարկայական խսկական  
ըմբռնումն, իսկ մտապատկերից եւ տարրերվում և նրանով, վոր ավելի  
մանրամասնություններ ունի, հանկարծական և առաջանում, անհատը  
չի զգում, վոր ակտիվ կերպով ցանկացավ այդ պատկերացումն ունե-  
նալ: Պոեվդոհալլյուցինացիան կարող և առաջանալ ոպյումի աղքեցու-  
թյան տակ, մտապատկերը զուրս և առարկայանում հաղիս մի վասնու-  
չափ առաջանության վրա, այդ պատկերները մարմնից զուրս են յերե-  
փում, բայց իրական—իսկական առարկաների նման չեն:

Հալլյունցինացիաները զգայարանների, բայց ավելի հավանական և  
ուղեղի մեջ աննորմալ ուժեղությամբ առաջացող զրգովածության հե-  
տեւանք են: Այս ինդիբը զես վերջնականորեն չի պարզված:

Գրականություն.—Կարնիլօվ: Սահմանական պարզություն. V լու.

Լազурսկիй:—Պահանջման պարզություն. VIII, IX և X.

### ԻՆՔՆԱՍՏՈՒԹՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչ զրգուից և առաջանում զգայությունը. 2. Առանձնացած  
զգայություն զոյսություն ունի՞։ 3. Վորոնք են զգայության հատկա-  
նիները: 4. Ի՞նչ զգայություններ են տալիս մեր զգայարանները.  
5. Ի՞նչ են նշանակում սպեցիֆիկ եներգիայի որենք, գրգոր կամ դրա-  
յության վերին և ներքին շեմք: 6. Ի՞նչ որինակարգություն և նկատված  
դրդիոնների հավելման և զգայության փոփոխության մեջ: 8. Ի՞նչ երե-  
մենաների սինթեզ և ըմբռնումը: 9. Փարզել ըմբռնման և ապերցեզցիա-  
յի փոխհարաբերությունը (զանել որինակներ): 10. Ըմբռնման հին և  
նոր ելեմենաներն ի՞նչպես են իրար միացած. 11. Ի՞նչ են նշանակում  
ըմբռնումն առարկայացած և զուրս: 12. Ինչպես և ապացուցվում  
ըմբռնման նոր ապրում լինելու յերեսությը: 13. Ի՞նչ զեր ունի ամբող-  
ջությունը ըմբռնման ժամանակ. 14. Ըմբռնման ի՞նչ տիպնը գոյսություն  
ունին. 15. Ի՞նչ հասկանալ ուղիղ, կասկածելի և սիսալ ըմբռնումներ  
առելիս. 16. Համեմատել իրար հետ իլյուզիան և հալլյուցինացիան:

Գրավոր պատասխանել հետևյալ հարցերին

1. Վերերի և ֆեխների որենք (առաջ որենքի նկարագիրը և ապա-  
ցուցել ինքնուրույն որինակներով):
2. Փարզել ապաբերցեզցիայի դերն ինքնուրույն որինակներով:
3. Որինակներ բերել ուղիղ, կասկածելի և սիսալ ըմբռնումների:
4. Իրար հետ համեմատել ուղիղ և սիսալ ըմբռնումներ:



30k

1950/110



